Հեռ.`+37410 528899
էլ.փոստ՝ bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

ՀՀ, ք Երևան
Վ. Սարգսյան 10,
Տարածք 114

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ղ-Տելեկոմ» ՓԲԸ բաժնետերերին

Մեր կողմից իրականացվել է «Ղ-Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերության և իր դուստր ընկերության (այսուհետև՝ «Խումբ») կից համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համախմբված հաշվապահական հաշվեկշիռը, նույն ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական արդյունքների, համախմբված սեփական կապիտալում փոփոխությունների և համախմբված դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և այլ ծանոթագրություններ:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել համախմբված ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մենք պատասխանատու ենք աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան մեր կողմից իրականացված աուդիտի հիման վրա նշված համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր արտահայտած կարծիքի համար: Այդ ստանդարտներով պահանջվում է աուդիտը պլանավորել և անցկացնել՝ համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ ողջամիտ երաշխիքներ ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են համախմբված ֆինանսական հաշվետվություններում ու համապատասխան ծանոթագրություններում արտացոլված տվյալները հիմնավորող փաստերի ձեռքբերման նպատակով մշակված ընթացակարգեր, որոնց ընտրությունը կախված է խարդախությունների և սխալների հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվություններում էական խեղաթյուրումների ռիսկերի առկայության վերաբերյալ աուդիտորական գնահատումներից: Ռիսկերի գնահատումները կատարելիս՝ աուդիտորը մշակում է համապատասխան ընթացակարգեր համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության գնահատման, այլ ոչ թե ընկերության ողջ ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք կազմելու համար: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների և ղեկավարության կողմից կատարված գնահատումների, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ մեր կարծիքն արտահայտելու համար:

Կարծիք

Մեր կարծիքով, կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ և իր դուստր ընկերության ֆինանսական վիճակը, և նույն ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ

Տնօրեն Վ. Սահակյան

Աուդիտոր Հ. Հովհաննիսյան

Երևան,
02 մայիսի 2016թ.

«Ղ-Տելեկոմ» ՓԲԸ

Շահույթի և վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	Ծան.	2015թ. հազար դրամ	2014թ. հազար դրամ
Գործառնական եկամուտ			
Բջջային ծառայություններ	5	43,623,800	48,149,399
Փոխկապակցման գծով հասույթ	6	19,076,863	21,236,531
Ռոումինգի ծառայություններ		5,010,194	5,687,066
Հասույթ ապրանքների վաճառքից	7	2,026,908	1,088,267
Ավելացված արժեքի ծառայություններ		218,684	548,897
Այլ հասույթ		1,019,349	887,075
Այլ գործառնական եկամուտ		813,450	745,261
		71,789,248	78,342,496
Գործառնական ծախսեր			
Մաշվածություն, ամորտիզացիա և արժեզրկում	8	(13,168,693)	(13,976,439)
Փոխկապակցման գծով ծախս	6	(10,519,518)	(12,782,424)
Աշխատավարձ և աշխատակիցների հատուցումներ	9	(8,938,193)	(9,255,597)
Այլ ցանցային գործառնական ծախսեր	10	(4,446,037)	(5,031,284)
Դիլերների միջնորդավճարներ		(1,594,477)	(1,846,879)
Ղեկավարության վճարումներ		(2,047,468)	(1,698,866)
Վաճառված ապրանքների ծախսեր	7	(1,807,754)	(1,008,926)
Վերալիցքավորման քարտերի և SIM քարտերի ծախսեր		(166,288)	(234,122)
Այլ գործառնական ծախսեր	11	(9,643,708)	(10,107,144)
		(52,332,136)	(55,941,681)
Գործառնական գործունեության արդյունք		19,457,112	22,400,815
Ֆինանսական եկամուտ	12	966,713	658,183
Ֆինանսական ծախսեր	12	(6,385)	(26,618)
Զուտ օգուտ/(վնաս) փոխանակման փոխարժեքի տարբերություններից	13	233,439	2,723,849
Շահույթ նախքան հարկումը		20,650,879	25,756,229
Եկամտահարկի գծով ծախս	14	(4,524,808)	(4,738,715)
Տարվա շահույթ		16,126,071	21,017,514
Այլ համապարփակ եկամուտ		-	-
Ընդամենը տարվա համապարփակ եկամուտ		16,126,071	21,017,514

Ֆինանսական հաշվետվությունները (էջ 6 -52) հաստատվել են Տնօրենների խորհրդի կողմից 2016թ. մայիսի 2-ին և թույլատրվել հրապարակման համար, ստորագրությամբ՝

Ռալֆ Յիրիկյան

Գլխավոր տնօրեն

Ռինատ Յուսուփալիև

Ֆինանսական և հաշվապահական բաժնի ղեկավար

	Ծան.	31.12.2015թ. հազար դրամ	31.12.2014թ. հազար դրամ
Ակտիվներ			
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	15	1,849,330	1,572,624
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	16	27,755,490	27,856,210
Չապահովված փոխառություններ կապակցված կողմերին	17	672,813	613,185
Կարճաժամկետ փոխառություններ աշխատակիցներին		269,146	530,282
Ընթացիկ եկամտահարկի գծով ակտիվներ		3,429,222	6,064,008
Մինչև մարման ժամկետը պահվող ավանդներ		1,656,174	291,737
Դրամական միջոցների և բանկային մնացորդներ	18	5,272,801	1,313,378
		40,904,976	38,241,424
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	19	42,559,471	43,773,883
Ոչ նյութական ակտիվներ	20	5,910,135	8,190,969
Չապահովված փոխառություններ կապակցված կողմերին	17	16,163,512	15,481,713
Հետաձգված եկամտահարկի գծով ակտիվներ	21	1,161,864	1,176,886
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման գծով		610,463	301,539
		66,405,445	68,924,990
Ընդամենը ակտիվներ		107,310,421	107,166,414

	Ծան.	31.12.2015թ. հազար դրամ	31.12.2014թ. հազար դրամ
Ընթացիկ պարտավորություններ			
Բանկային օվերդրաֆտ		-	1,487,976
Հետաձգված հասույթ	22	1,644,264	1,960,811
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	23	6,914,491	6,161,935
		8,558,755	9,610,722
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ	24	429,853	359,950
		429,853	359,950
Ընդամենը պարտավորություններ		8,988,608	9,970,672
Զուտ ակտիվներ		98,321,813	97,195,742
Կապիտալ և պահուստներ	25		
Բաժնետիրական կապիտալ		550,000	550,000
Պահուստային կապիտալ		82,500	82,500
Կուտակված շահույթ		97,689,313	96,563,242
Ընդամենը սեփական կապիտալ		98,321,813	97,195,742

Ֆինանսական հաշվետվությունները (էջ 6 -52) հաստատվել են Տնօրենների խորհրդի կողմից 2016թ. մայիսի 2-ին և թույլատրվել հրապարակման համար, ստորագրությամբ՝

Ռալֆ Ցիրիկյան

Գլխավոր տնօրեն

Ռինատ Յուսուփալիև

Ֆինանսական և հաշվապահական բաժնի ղեկավար